

1965 - ի Տարեկան Զեկոյց Հռվիւին  
Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ  
Պրիճքո ըթ, Հէնթ.

Սիրելի անդամներ,

Փառք կուտամ Աստուծոյ, որ ինձի առողջութիւն եւ կեանք պարգելեց  
որպէսզի ձեր բոլորանուէր օժանդակութեամբ տարի մը եւս ծառայեմ իր փառքին եւ Հայց.  
Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Հետեւեալ համեստ աշխատանքները տարած ենք անցեալ տարուան ընթացքին:

Ս. Պատարագ.-

Ամէն Կիրակի եւ զոյգ ճրագալոյցներուն ունեցած ենք Ս. Պատարագ, Նաեւ Ս.  
Ստեփանոսի եւ Ամերիկեան Սնունդի առթիւ: Մեծ Պահոց շրջանին ունեցանք, Խաղական  
եւ Հանգստեան ժամերգութիւն, Արեւադալի եւ Աւագ Շաբթուան արարողութիւններ:

Ապրիլեան Նահատակաց Յիսոնմեակի առթիւ, Շաբթու Ապրիլ 24-ի երեկոյեան ունեցանք  
մասնաւոր Հոգեհանգստեան արարողութիւն:

Պարոզները տուած եմ միշտ Անգլերինով եւ երբեմն երկլեզու, որպէսզի մեր երիտասարդ  
եւ Հայկական ենունդ չունեցող անդամները հասկնան օրուան Հոգեւոր պատգամցա  
Հինգ Կիրակիներ եկեղեցին փակ մնացած է. Զիւնի, Պատգամաւորական ժողովին եւ արկածի  
հետեւանքով հանգստի արձակութզէս ուշանալուս պատճառաւ:

ԱՅՅԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ.-

1965 Տարուան ընթացքին ունեցած ենք Հետեւեալ այցելու եկեղեց-  
ականները: Գեր. Տօմիոն Ս. Արք. Մանուկեան, Գեր. Տ. Եղիշէ Ս. Եպկ. Սիմոնեան, Հոգ. Տ.  
Եղիշէ Վրդ. Կիրիկեան, Արժ. Տ. Լեւոն Հնյ. Առաքելեան, Բարշ. Գրիգոր Սրկ. Ոսկանեան:

ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.՝

Հետեւեալ Եիսակատարութիւնները կատարած ենք եկեղեցւոյս մէջ:

Սկ թութիւններ՝ 6 - Պսակադրութիւններ՝ 3 - Թաղումներ՝ 6 -:

Ասոնցմէ զուրս մասնակցած եմ Հանգուցեալ Տ. Պետրոս Հնյ. Ֆրէնեանի թաղմանական  
արարողութեանց, Սիրիկֆիլտ:

Առաջնորդ Սրբազան Հօր Հետ ազգայինի մը թաղման ի նիւ Պրիթըն:

Պսակադրութիւն մը կատարած եմ Թրոյ: Պսակադրութեան մը մասնակցած եմ Ս. Թովմաս  
Հայց. Սկեղեցին, Թէնըթլայ, Նիւ Ճըզի:

ԳերեզմանօրՀնէթ կատարած եմ Թիշտակութեան Օրուան առթիւ եւ մասնաւոր  
գերեզմանօրՀնէթ այլ առիթներով երբ ներկայացած է:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Եկեղեցւոյս անդամներուն եւ շրջանի հայ ժողովուրդին անխտիր, այցելու-  
թիւններ տուած եմ կարելիութեան սահմաններուն մէջ, աղօթելու, մխիթարելու եւ օրհ-  
նելու համար, մասնակցելով անոնց ուրախութեանց եւ բաժնեկից ըլլալով անոնց ցաւե-  
րուն:

Սխական այցելութիւններ տուած եմ թիւով

267

ՏունօրՀնէթի առթիւ

35

Յաւակ ցական այցելութիւններ

26

Նրեթառւն Հիւանդանոցը այցելած եմ

2

Հիւանդանոց Հիւանդներու

46

Հիւանդներու իրենց տուններուն մէջ

37

ՀՊՀ. Գումար

393

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ եւ ԺՈՂՈՎՆԵՐ

Մասնակցած եմ Թեմական Տարեկան Պատգամաւորական Համագու-  
մարին, Եկեղեցւոյս Սխական Խորհուրդի Ատենապետ եւ Երեսփոխանական անձնափոխանորդ,  
Տօքթ. Պերճ Հայրապետանի Հետ, Ներկացացնելով Պրեքրորթի Ս. Համբարձում Հայց. Եկեղե-  
ցին: Պատգամաւորական ժողովին ատենապիրը ընտրուեցայ անցեալ տարին:

Այս համագումարը կանխող երկու օրերուն մասնակցեցայ նաեւ Հոգեւորականաց համա-  
գումարին, Ս. Սահակ եւ Ս. Սեւրով եկեղեցին, Վէսթ Ֆիլատէլիա:

Երջանային Հոգեւորականաց ժողովներուն ամէն ամիս, որոնք կը գումարուին ի պայծառութիւն Հայց. Եկեղեցւոյ եւ յօդուտ մեր Համայնքային գործերու կանոնաւորման։ Եկեղեցւոյ Սխական Խորհուրդի, Տիկնաց Միութեան, Պազարի Յանձնախումբի, Կիրակնօրեալ Դպրոցի, Երիտասարդաց Կազմակերպութեան եւ Դպրաց Դասի, Ժողովներուն, ճաշերուն եւ ֆորձերուն, Քիշտ սիրայօժար Ներկայ եղած եմ եւ ջանացած եմ ուղղութիւն տալ եւ օգնել անոնց գործերուն։

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Ունեցած են, հետեւեալ ձեռնարկները, որոնց գործոն մասնակցութիւնս բերած եմ։

Վարդանանց Տօնակատարութեան. Փետր. 28-ին։

Սպրիլեան Սգատոնի 50-րդ Յիշտակահանդէսին. Սպրիլ 25-ին։

Յունիս 6-ին, Եկեղեցւոյ Անուանակոչութեան։

Յուլիս 4-ին, Եկեղեցւոյ Դաշտահանդէսին։

Յ Եկեղեցւոյ Պազարին, Նոյմ. 12-13-ին։

Դեկտ. 31-ին, Նոր Տարուան Խրախնանցին։

#### ԱՅԼ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Ներկայ եղած եմ նաեւ հետեւեալ ձեռնարկներու։

Վարդանանց Ասպետներու Ճաշկերոյթին, Հայ Միսիոնարներու Պաշտահանդէսին, Նահանգիս Կառավարիչին քով, Սպրիլեան Նահատակաց 50ամեակի առթիւ, "Յիշտակի Օր"ուան յայտարարագիրը ստանալու, մեր քոյր Եկեղեցիներու Հովիւներուն հետո Լոնկ Այլ ընտ, Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան անդամները տարի։ Ֆէրլոնի, Սըրոց Ռեւոնդեանց Եկեղեցւոյ Թօման ճաշկերոյթին։ Պոլսոյ Պատրեարք, Ամենապատիւ Շնորհը Ս. Արք. Գալուստեանի ընդունելութեան ի նիւ նորք։ Առաջնորդարան, Եկեղեցւոյ գործերով։

Սասնաւոր այցելութիւն մը տուած եմ Նակաթքը Բիթքը Բոլի գործարանը, Ժամագրութիւն մը առնելու որպէսզի Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները պտոյտի տանինք։

#### ԴԱՍԱՎԱՐԱՆ ՍՊԻԻԹԻՒՆ

Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան անդամներուն եւ Համայնքիս ժողովուրդին Մշակութային զարգացման Համար, կյ. Սի. Վայ. Օի. Նախաձեռնութեամբ, Կազմակերպութիւնը դասախոսութիւն մը, ուր խօսեցայ "Հայ Գրերու Սագումը" Նիւթին մասին։

#### ՀԱՅ ԴՊՐՈՊ

Անցեալ տարի շատ լաւ ակսած էինք Հայ Դպրոցը, սակայն չենք գիտեր ինչ պատճառաւ աշակերտութեան թիւը 18-էն իշաւ 2-ի եւ ստիպուած եղանք դադրեցնել։ Խոկ այս տարի մեր կոչին պատասխանեցին եւ արձանագրուելու Ներկայացան միայն երկու փոքրիկ-ներէկետեաբար չկըցանք Հայ Դպրոց սկսիլ այս տարի։

#### ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՈՐԾԵՐ.-

Խորհրդակատարութեանց արձանագրութիւնները, Սկրտութեանց, Ամուսնութեանց եւ մահերու առթիւ կանոնաւորաբար կատարած ենք մասնաւոր տոմարի մը մէջ։ Թղթակցութիւններ եւ Նախաձեռնութեամբ, Կազմակերպութիւններ եղած եւ պահուած մասնաւոր թղթաժարներու մէջ։

Սկրտութեանց, Ամուսնութեանց, Հիւանդութեանց, Սահերու, ուրախութեանց թէ տիսուր առիթներու, նաեւ Նոր Տարուան եւ Ս. Սնունդի առթիւ անձնական ծախսով քարգեր դրկան եմ ծխականներուս։ Կիրակնօրեայ Դպրոցի եւ Հայ Դպրոցի աշակերտութեան եւ Ուսուցիչներուն, նաեւ Դպրաց Դասի անդամներուն, փոքր նուերներով ջանացած եմ ուրախացնել։ Տօնակածարի Գիրք. /ՊԱԶԱՐ էՏ ՊՈՒԹ/

Այս տարի զարձեալ պազարի առթիւ Հրատարակեցինք նուիրատուներու գիրք մը։ Ացօքանքի Հոս կուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Տիկ. Թերեզա Հայրապետեանի, որ գրքին մեցենագրութեան ծանը գործը իր վրայ առաւ եւ զիս մեծ հոգնութենէ մը ազատ կացոյց այս տարի, մանաւանդ որ այն օրերուն լաւ չէի զգար։ Կողքի տպագրութիւնը եւ գետքրութիւնը կատարեց Պր. Սորկըն և էօլեան եւ նուիրեց Եկեղեցին. Խոկ գրքին զասաւորումն ու բազմագրութիւնը կատարեցի ես։

#### ՀԱՍՑԵԱԳԻՐ

Մեր տրամադրութեան տակ ունեցած անուներով եւ Հասցէներով, Կազմեցինք շըջանիս Հայութեան եւ Եկեղեցւոյ անդամներուն Հասցէները պարունակող Հասցէագիրը մը, որպէսզի թէ մեր Եկեղեցւոյ կազմակերպութիւնները եւ թէ ալ Համայնքի ժողովուրդը զիւրութեամբ կարենան իրարու հետ Հաղորդակցութեան մտնել։ Կը յուսանց յաջորդ տարի յաւելումներով եւ ճշգումներով նոր մը պատրաստել։

ՄԽԱԹԵՐԹԻԿԸ

"Ս.Հ.Համբարձում", եկեղեցւոյս ծխաթե ըթիկը կանոնաւո ըաբար հրատարակած ենք երկլեզու, պատկերագիր, գեղարվագիպ եւ բովանդակալիք, ըստ այլոց վկայութեանց: Բերթիկին բոլոր գործերը, ինչպէս նաև ժողովներու, ձեռնարկներու, յայտարարութիւնները, յայտարարութիւնները եւ տոմսակներու պատրաստութիւնները կ'ընեմ:

Հոս տեղին է յիշել, թէ թուղթ ծալող մեքենայ մը եթէ ունենանց մեծ շափոց կրնայ դիւրացնել գործս:

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժիշկիս յանձնառարութեամբ եւ Պատուարժան Սխական Խորհուրդի հաւանութեամբ, Յուլի 15-էն, Օգոստոս 15, մէկ ամսուան Հանգիստի արձակուրդի մը գացի: Սակայն զբաղկանի ինքնաշարժի դժբախտ արկածի մը հետեւանցով ստիպուեցայ ամիս մը ուշանալ:

ԵՆՈՐՃԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կը Փափաքիմ սրտագին շնորհակալութիւններս յայտնել նախ Պատուարժան Սխական Խորհուրդի անդամոց, որոնք Համբերութեամբ եւ անձ Խուիրութեամբ զօրագիդ Հանդիսացան բոլոր եկեղեցւոյ գործերուն եւ ոչ մէկ ջանք խնայեցին եկեղեցւոյ պայմանութեան եւ Աստուծոյ փառքին Համար:

Սնորհակալութիւն նաև Տիկնաց եկեղեցասիրաց Սիութեան, Կիրակնօրեայ Դպրոցի, Դպրաց Դասին, Երիտասարդաց Կազմակերպութեան, Պազարի Յանձնախումբին եւ բոլոր այն ազնիւ եւ եկեղեցասէր անձերուն որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակեցին մեզ, մեր եկեղեցաշէն գործին յառաջացման եւ մեր Համայնքին հոգեւոր եւ ազգային կեանքին կենսունակութեան եւ բարօրութեան ի խնդիր:

Կ'աղօթեմ, որ Աստուած օքնէ բոլորին, երկնային շնորհներով եւ բարիբներով լիացնէ զանոնց. երկար առողջ կեանք պարզեւէ իրենց, որպէսզի շարունակեն իրենց եկեղեցաշէն եւ Աստուածահնոյ գործը, սիրոյ, Համագործակցութեան եւ իսկական Հայ քրիստոնեայի ոգիով ու նուիրումով:

Օքնեալ ըլլաք այժմ եւ յափտեան. Ամէն:

Աղօթաբար

*Անդրի Անդրի Ջայջջյան*

Սարգիս Ջէնյ. Գաշըգնեան

Հովիտ

Ս.Հ.Համբարձում Հայց. Եկեղեցւոյ Պրինցորթ, Քէնթ.

Դեկտ. 31, 1965